ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԿՇԻՌՆԵՐԻ ԵՎ ՉԱՓԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ (ԿՉՄԲ/BIPM)» ԱՍՈՑԱՑՎԱԾ ԵՎ «ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ (ՕՉՄԿ/OIML)» ԹՂԹԱԿՑԱՅԻՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆԱՄԱԿ-ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԵՎ

ՏԵՂԵԿԱՆՔ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Կշիռների և չափերի միջազգային բյուրոն (այսուհետ՝ Կազմակերպություն) (ԿՉՄԲ) 1875 թվականի Չափի կոնվենցիայի հիման վրա ստեղծված միջազգային կազմակերպություն է: Այն համակարգում է միջազգային չափագիտությունը և միջազգայնորեն ճանաչված չափումների համակարգերի մշակումը:

Կազմակերպությանը ասոցացված անդամ դառնալը միտված է ՀՀ չափումների միասնականության ապահովման համակարգի զարգացմանը, արտադրող-սպառող առևտրային հարաբերությունների կարգավորմանը, ինչպես նաև նորարարությունների, արդյունաբերական արտադրության, գիտահետազոտական ոլորտներում համագործակցության ընդլայնմանը:

Կազմակերպությանը ներկայումս անդամակցում են 64 անդամ պետություններ և 37 ասոցացված պետություններ և տնտեսություններ:

Չափագիտության նպատակն է միջազգային ստանդարտներին համապատասխան արդյունաբերական չափագիտական կարողությունների և երկրի տնտեսական զարգացումը, ինչպես նաև ռեսուրսների արդյունավետ վերահսկումը, բնակչության սոցիալական կայունությունը: Կազմապերպության անդամակցությունը կարևոր է նաև այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետության հիմնական տնտեսական ճյուղեր հանդիսացող՝ սննդի

արդյունաբերության, մետաղային արդյունաբերության, հանքարդյունաբերական, SS, ինչպես նաև դեղագործական արտադրանքի արտահանման համար կապավովվի համապատասխանության գնահատում միջազգայնորեն ճանաչված գնահատման մարմինների կողմից:

Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպությունը (ՕՉՄԿ/OIML) (այսուհետ՝ Կազմակերպություն) ստեղծվել է 1955 թվականի հոկտեմբերի 12-ին՝ համանուն կոնվենցիայի ստորագրմամբ: Կազմակերպության ստեղծմամբ անդամ պետությունները նպատակ են ունեցել միջազգայնորեն լուծում տալ չափման գործիքների կիրառման հետ կապված խնդիրներին՝ նպաստելով փոխադարձաբար համադրելի և միջազգայնորեն ճանաչված օրենսդրական չափագիտության արդյունավետ ենթակառուցվածքների կայացմանը:

Հայաստանը՝ դառնալով Կազմակերպության թղթակցային անդամ, հնարավորություն է ձեռք բերում ստանալ տեղեկություն Կազմակերպության աշխատանքի վերաբերյալ այնպես, ինչպես անդամ պետությունները, մասնակցել Կազմակերպության նախագծային խմբերի տեխնիկական աշխատանքներին՝ առանց ձայնի իրավունքի, ներկա գտնվել Կազմակերպության Խորհրդաժողովի և Իրավական չափագիտության միջազգային կոմիտեի նիստերին:

Անդամակցությունը Հայաստանի համար կարևորվում է օրենսդրական չափագիտության բնագավառում նորմատիվաիրավական բազայի թարմացման և օրենսդրական չափագիտության ոլորտում միջազգային փորձի ներդրման համար, ինչպես նաև միտված է օրենսդրական չափագիտության գործուն ենթակառուցվածքների ստեղծմանը:

Ներկայումս Կազմակերպությանն անդամակցում է 64 անդամ պետություններ և 66 թղթակցային անդամներ:

Նամակ-համաձայնագրերը ուժի մեջ են մտնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հաստատման/վավերացման

ներպետական ընթացակարգերի ավարտման մասին ծանուցումը «Կշիռների և չափերի միջազգային բյուրոյի» և «Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության» կողմից ստանալու ամսաթվից:

Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 11-րդ հոդվածի դրույթներով՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը նպատակահարմար է համարում «Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպությանը» թղթակցային և «Կշիռների և չափերի միջազգային բյուրոյին» ասոցացված անդամ դառնալու մասին նամակ-համաձայնագրերի վավերացումը կամ հաստատումը:

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ԿՈՍՏԱՆՅԱՆ

Signed by: KOSTANYAN VAHAN 1112940502

ՎԱՀԱՆ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՑԱՆԿ

ԿՇԻՌՆԵՐԻ ԵՎ ՉԱՓԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ (ԿՉՄԲ/BIPM) ԱՍՈՑԱՑՎԱԾ ԱՆԴԱՄՆԵՐԻ

Անդամ	**Անդամակցել է**
1.Ալբանիա	10.09.2007
2.Ադրբեջան	01.01.2015
3.Բանգլադեշ	29.03.2010
4.Բոլիվիա	04.04.2008
5.Բոսնիա և Հերցեգովինա	24.05.2011
6.Բոցվանա	30.05.2021
7.Կարիբյան համայնք (CAROCOM)	10.10.2005
8.Կամբոջա	01.01.2021
9.Չինական Թայբեյ	26.04.2002
10.Կուբա	16.10.2024
11.Եթովպիա	01.01.2018
12.Վրաստան	01.01.2008
13.Գանա	17.09.2009
14.Հոն Կոնգ / Չինաստան	08.04.2000
15.Ջամայկա	15.09.2003

16.Քուվեյթ	23.03.2018
17.Լատվիա	11.01.2001
18.Լյուքսեմբուրգ	29.01.2014
19.Մալթա	11.04.2001
20.Մավրիկիոս	05.10.2010
21.Մոլդովայի Հանրապետություն	01.01.2007
22.Մոնղոլիա	07.08.2013
23.Նամիբիա	10.08.2012
24.Հյուսիսային Մակեդոնիա	10.10.2006
25.Օման	08.05.2012
26.Պանամա	03.08.2003
27.Պարագվայ	06.05.2009
28.Պերու	28.05.2009
29.Ֆիլիպիններ	01.06.2002
30.Կատար	10.03.2016
31.Շրի Լանկա	17.108.2016
32.Սիրիա	31.05.2012
33.Տանզանիա	01.01.2018
34.Ուզբեկստան	13.07.2018
35.Վիետնամ	10.10.2003
36.Զամբիա	10.12.2010
37.Զիմբաբվե	08.02.2022

ՑԱՆԿ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ (ՕՉՄԿ/OIML) ԹՂԹԱԿՑԱՅԻՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ

Անդամ
1.Անգոլա
2.Արգենտինա
3.Ադրբեջան
4.Բանգլադեշ
5.Բահրեյն
6.Բարբադոս
7.Բենին
8.Բոլիվիա
9.Բոսնիա և Հերցոգովինա
10.Բոցվանիա
11.Բուրկինաֆասո
12.Չինական Թայբեյ
13.Կոստա Ռիկա
14. Ջիբութի
15.Դոմինիկյան Հանրապետություն
16.Էկվադոր
17.Էստոնիա
18.Ֆիջի

19.Գաբոն
20.Վրաստան
21.Գանա
22.Գվատեմալա
23.Գվինեա
24.Գայանա
25.Հոնգ Կոնգ
26.Իսլանդիա
27.Իրաք
28.Հորդանան
29.Կիրիբատի
30.Քուվեյթ
31.Ղրղզստան
32.Լատվիա
33.Լիտվա
34.Լյուքսեմբուրգ
35.Մադագասկար
36.Մալավի
37.Մալայզիա
38.Մալի
39.Մալթա
40.Մավրիկիոս
41.Մեքսիկա
42.Մոլդովա
43.Մոնղոլիա
44.Մոզամբիկ
45.Նամիբիա

46.Նեպալ
47.Նիգերիա
48.Օման
49.Պանամա
50.Պապուա Նոր Գվինեա
51.Պարագվայ
52.Պերու
53. Ֆիլիպիններ
54.Կատար
55.Ռուանդա
56.Սենթ Լյուսիա
57.Սեյշելներ
58.Սիեռա Լիոն
59.Սինգապուր
60.Սուդան
61.Տրնիդադ և Տոբագո
62.Ուգանդա
63.ԱՄԷ
64.Ուրուգվայ
65.Ուզբեկստան
66.Զիմբաբվե